ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

հրավերի պարզաբանման մասին

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի 2022 թվականի հոկտեմբերի 24-ի թիվ 1.1 որոշմամբ և հրապարակվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն
Ընթացակարգի ծածկագիրը «ԵՐՄՄԳ-ԳՀԾՁԲ-ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ-2022»

«Երևանի մաթեմատիկական մեքենաների գործարան» ՓԲԸ-ի կարիքների համար՝ փորձաքննության ծառայության ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԵՐՄՄԳ-ԳՀԾՁԲ-ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ-2022» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերի վերաբերյալ 21.10.2022թ. ստացված հարցումը և դրա վերաբերյալ 24.10.2022թ. տրամադրված պարզաբանումը՝

Հարցադրում N 1

Որակավորման ապահովման ժամկետ նշված է պայմանագրի կատարման արդյունքը պատվիրատուի կողմից ամբողջական ընդունվելու օրվան հաջորդող 90-րդ աշխատանքային օրը ներառյալ,իսկ պայմանագրի ապահովման ժամկետ՝ պայմանագրով սահմանվող պարտավորությունների ամբողջական կատարման վերջին օրվան հաջորդող 90-րդ աշխատանքային օրը ներառյալ: Խնդրում եմ պարզաբանել պայմանագրի կատարման արդյունքն ամբողջությամբ ընդունվելու և պայմանագրով սահմանվող պարտականությունների կատարման տարբերությունը, որն է համարվում պայմանագրով սահմանված պարտականությունների ամբողջական կատարում և որն է համարվում պայմանագրի կատարման արդյունքն ամբողջությամբ ընդունում: Խնդրում եմ հնարավորության դեպքում պատասխանել նաև ռուսերեն լեզվով

Պարզաբանում N 1

Ի պատասխան Ձեր հարցադրմանը հայտնում եմ Ձեզ, որ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով սույն գնման գործընթացի կազմակերպման շրջանակներում ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովման պահանջներն իրենցից ներկայացնում են կնքվելիք գնման պայմանագրով մատուցված ծառայությունների պատշաճ որակով մատուցման և պայմանագրով սահմանվելիք պարտավորությունների պատշաճ կատարման ապահովման երաշխիք:

Ձեր կողմից ներկայացված պայմանագրի կատարման արդյունքն ամբողջությամբ ընդունելու հասկացությունն իրենից ներկայացնում է մատուցվելիք ծառայության պայմանագրով սահմանված ժամկետում և/կամ ժամկետից դուրս /պարտավորության կատարման կետանց/ կատարելու և նույն պայմանագրով սահմանված հանձման-ընդունման ակտը պատվիրատուի կողմից ստորագրելու փաստը, որից հետո Ձեր կողմից մատուցված ծառայության որակի պատշաճ լինելու հանգամանքի համար ներկայացված ապահովումը գործելու է ևս 90 աշխատանքային օր, իսկ ինչ վերաբերվում է պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարմանը՝ տեղեկացնում եմ Ձեզ, որ նշված հանգամանքն իրենից ներկայացնում է Կատարողի կողմից կնքվելիք պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարում, ինչի ապահովման համար կիրառվում է պայմանագրի ապահովում հասկացողությունը, որը կարող է գործել ինչպես պայմանագրի կատարման շրջանակներում, այնպես էլ պայմանագրի կատարման արդյունքները սահմանված կարգով հանձնելուց հետո պայմանագրով Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունների իրականացման շրջանակներում:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել «ԵՐՄՄԳ-ԳՀԾՁԲ-ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ-2022» ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար՝ Ս.Դեմիրճյանին:

Հեռախոս +374 (43) 700-241
Էլ. փոստ gnumner.yermmg@gmail.com
«ԵՐՄՄԳ-ԳՀԾՁԲ-ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ-2022» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողով

ОБЪЯВЛЕНИЕ
о разъяснении приглашения

Настоящий текст заявления утвержден оценочной комиссией
Постановлением от 24 октября 2022 года и публикуется
Согласно статье 29 Закона РА " О закупках

Код процедуры ԵՐՄՄԳ-ԳՀԾՁԲ-ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ-2022

Организованная с целью приобретения услуг экспертизы для нужд «Ереванского завода математических машин» ЗАО, комиссия по оценке процедуры с кодом ԵՐՄՄԳ-ԳՀԾՁԲ-ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ-2022 ниже представляет вопрос, полученная по приглашению с тем же кодом 21 октября 2022 года по электронной системе закупок armeps.am, и разъяснения по ним, предоставленное 24 октября 2022 года:

Вопрос

Срок обеспечения квалификации составляет 90-й рабочий день после даты полной приемки заказчиком результата исполнения договора, а срок обеспечения квалификации - 90-й рабочий день после последнего дня полного выполнения обязательств, определенных договором. Уточните, пожалуйста, разницу между полным принятием результата исполнения договора и выполнением обязанностей, определенных договором, что считается полным исполнением обязанностей, определенных договором, и что считается полным принятием результата выполнения договора. контракт. Пожалуйста, если можно, также ответьте на русском языке.

Разъяснение

В ответ на ваш вопрос сообщаю вам, что требования обеспечения квалификации и договора, представленные в рамках организации данного процесса закупки в установленном законодательством РА порядке, представляют собой гарантию обеспечения надлежащего качества услуг, предоставленных заключаемым договором закупки, и надлежащего выполнения обязательств, которые будут установлены договором.

Понятие полного принятия результата исполнения договора, представленного вами, представляет собой факт исполнения обязательства в срок и/или вне срока, установленных договором об оказанной услуге, и подписания заказчиком установленного тем же договором акта о передаче-принятии, после чего обеспечение, представленное для того, чтобы качество предоставленной вами услуга было надлежащим, будет действовать еще 90 рабочих дней, а что касается исполнения обязательств, установленных договором, сообщаю вам, для обеспечения этого применяется понимание обеспечения договора, которое может действовать как в рамках исполнения договора, так и в рамках реализации обязательств, принятых исполнителем по договору после передачи результатов исполнения договора в установленном порядке.

Для получения дополнительной информации, связанной с этим объявлением, вы можете обратиться
Секретарю оценочной комиссии по коду ԵՐՄՄԳ-ԳՀԾՁԲ-ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ-2022 Сусанне Демирчян.

Телефон: +374 (43) 700-241
Электронная почта: gnumner.yermmg@gmail.com
Оценочная комиссия по процедуре закупки под кодом ԵՐՄՄԳ-ԳՀԾՁԲ-ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ-2022